

Հաստատում եմ՝



«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
գեղարվեստական համալսարան» հիմնադրամի
ռեկտոր

Ե. Ս. Սերոբյան
«05» Մայիս 2022թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Խիպաշվիլի Իլյա Ալբերտի

ԺԳ.00.02. «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա)
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման համար ներկայացված՝
«Ֆուտբոլիստների մարզման և ընտրության գործընթացի համակարգչային մեթոդը»
թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ժամանակակից ֆուտբոլը այսօր առանձնանում է իր սրընթաց զարգացմամբ և բարձր արդյունքների նվաճումը անհնարին է առանց սպորտային ռեզերվի բարձրակարգ պատրաստության: Այս առումով մարզիկի հեռանկարայնությունը որոշվում է նրա շարժողական ներուժի, ֆիզիկական վիճակի և օրգանիզմի ֆունկցիոնալ հնարավորությունների կատարելագործման, նոր շարժողական հատությունների ձևավորման, մարզումային և մրցումային բարձր բեռնվածություններ կրելու կարողությունների հիման վրա: Ընդունված է համարել, որ սպորտային ընտրությունը կազմակերպչամեթոդական միջոցառումների համալիր է, որը ներառում է մանկավարժական, սոցիոլոգիական, հոգեբանական և բժշկակենսաբանական ուսումնասիրության մեթոդները, որոնց հիման վրա բացահայտվում են երեխաների հակվածությունը և հնարավորությունները տարբեր մարզաձևերում մասնագիտանալու համար:

Հայտնի է, որ մարզիկների կարևորագույն ֆիզիոլոգիական ցուցանիշներից է համարվում ռեակցիայի արագությունը, որով պայմանավորված է նրա սպորտային հաջողությունը, թե որքանով ժամանակին և ռացիոնալ կգործի մարզիկը: Այս ցուցանիշի դրսևորումը հատկապես մեծ տեղ է զբաղեցնում ֆուտբոլում, որպես բարդ կոորդինացիոն և արագուժային մարզաձև:

Ժամանակակից սպորտում համակարգչային տեխնոլոգիաները արդեն իսկ բավականաչափ ներդրված լինելով որպես միջոց և մեթոդ՝ թույլ են տալիս հատուկ մշակված և տեղայնացված համակարգչային ծրագրերի, թեստերի միջոցով ուսումնասիրել մարզման գործընթացի տարբեր կողմերը և զարգացնել մարզիկների սպորտային ցուցանիշները, այդ թվում ռեակցիայի արագությունը և համաչափությունը:

Այս համատեքստին է վերաբերում ստենախոսական աշխատանքի ամբողջ էությունը և գործընթացի տրամաբանությունը:

Ստենախոսությունը շարադրված է համակարգչային 131 էջի վրա, այն բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, գործնական և մեթոդական առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից (166 աղբյուր), պարունակում է 17 նկար, 26 աղյուսակ, մեկ տրամագիր:

Ստենախոսության ներածության բաժնում հստակորեն ձևակերպված են աշխատանքի արդիականությունը, նպատակը, խնդիրները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքում հայցորդը նպատակ է ունեցել մշակել, գիտափորձով հիմնավորել, ինչպես նաև պրակտիկայում ներդնել պատանի ֆուտբոլիստների տեսողական ռեակցիայի արագության և համաչափության գնահատման ու շտկման նպատակով մասնագիտացված համակարգչային մեթոդիկա, որը ներառում է ռեակցիայի որոշման համակարգչային թեստերի և հատուկ ֆիզիկական վարժությունների համակցված կատարում՝ ուղղված ընտրության և մարզման գործընթացի օպտիմալացմանը՝ ֆուտբոլիստների որակավորումների, տարիքային և մորֆոֆունկցիոնալ ցուցանիշների հաշվառմամբ:

Աշխատանքն իրականացնելիս հեղինակն ուսումնասիրել է բավականաչափ մասնագիտական գրականություն, կատարել բազմաբովանդակ վերլուծություն: Կատարած վերլուծությունները ի մի են բերվել «Գրականության ակնարկ» ստենախոսական աշխատանքի առաջին գլխում: Տվյալ գլխում դիտարկվում են.

- մարզման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները՝ պատանի ֆուտբոլիստների հնարավորությունների հաշվառմամբ,
- պատանի ֆուտբոլիստների սպորտային պիտանելիության մանկավարժական չափանիշները և ռեակցիայի արագության բարելավմանը ուղղված վարժությունները:

Քննարկվում են սպորտում համակարգչային տեխնոլոգիաների կիրառման կողմերը, կատարվել է հարցի շուրջ գիտամեթոդական գրականությունում առկա տվյալների վերլուծություն և ընդհանրացում, որի արդյունքում հեղինակը օբյեկտիվորեն հանգել է այն եզրակացության, որ պրակտիկայում բացակայում են համակարգչային թեստավորման անհատական ծրագրերը, որոնք կարող են նպաստել պատանի ֆուտբոլիստների վաղ ընտրության և կողմնորոշման հարցերին՝ հիմնված նրանց անհատական առանձնահատկությունների վրա: Այս խնդրի լուծման համար հայցորդը առաջարկում է կիրառել պատանի ֆուտբոլիստների համակարգչային թեստավորման համակարգը (ստեղծված՝ Վրաստանի ֆիզիկական դաստիարակության և սպորտի ակադեմիայի բազայում), ուղղված՝ նրանց ընտրության և ուսումնամարզական պարապմունքների բարելավմանը:

Ատենախոսության երկրորդ գլխում ներկայացված են հետազոտության կազմակերպումը և մեթոդները: Առաջին ենթագլխում ներկայացված է համակարգչային թեստավորման համար պատանի ֆուտբոլիստների ընտրության մեթոդաբանությունը: Հեղինակը 3 տարիների ընթացքում հետազոտել է 9-17 տարեկան 1435 դեռահասների և պատանիների: Պատանի ֆուտբոլիստների ֆիզիկական վիճակի գնահատումը իրականացվել է 5 մեթոդական խմբերով՝ մարդաչափական, սիրտանոթային, ԿՆՀ վիճակի, ֆիզիկական պատրաստվածության, աշխատունակության: Հետազոտություններում ներգրավված են եղել նաև սպորտային բժշկության մասնագետներ՝ նպատակ ունենալով գնահատել պատանի մարզիկների «պիտանելիությունը» կամ «ոչ պիտանելիությունը» ֆուտբոլով զբաղվելու համար:

Պատանի ֆուտբոլիստների մորֆոլոգիական ցուցանիշների հետազոտության արդյունքում դուրս են բերվել նրանց խաղային ֆունկցիաները: Երկու տարի մարզումներից հետո նրանց առաջարկվել են կոնկրետ խաղային դերեր:

Երկրորդ ենթագլխում ներկայացվում է հետազոտության կազմակերպումը և կիրառվող համակարգչային մեթոդիկայի նկարագրությունը: Տարբերակված սանդղակով գնահատման արդյունքում ընտրվել են լավագույն արդյունքներ ցուցաբերած 157 պատանիներ, որոնցից 98-ը ներգրավվել են հիմնական խմբում, իսկ 59-ը՝ ստուգողական, ինչպես նաև հետազոտությունում ներգրավվել են թվով 10 մեծահասակ բարձրակարգ մարզիկներ:

Երրորդ ենթագլխում ներկայացված են ռեակցիայի և ուշադրության կենտրոնացման

բարելավման համար մշակված ֆիզիկական վարժությունների հատուկ համալիրները:

Աշխատանքի երրորդ «Հետազոտության արդյունքները» վերնագրով գլխում՝ բաղկացած 4 ենթագլուխներից, ներկայացված են պատանի ֆուտբոլիստների և ոչ մարզիկների միջև ռեակցիայի (արձագանքման) արագության և համաչափության գործակցի բնորոշ տարբերությունները, ըստ թեստավորման արդյունքների: Ուսումնասիրվել են տարիքից կախված ռեակցիայի արագության և համաչափության գործակցի փոփոխությունները դեռահասների և պատանիների մոտ, վերլուծվել է ռեակցիայի արագության և համաչափության գործակցի կախվածությունը տարիքային փոփոխություններից, որակավորումներից և պատանիների խաղային դերերից (ամպլուա), ինչպես նաև ներկայացված է համակարգչային թեստավորման անհատական ծրագիրը պատանի ֆուտբոլիստների ընտրության և մարզման գործընթացի շտկման համար:

Աշխատանքի չորրորդ «Հետազոտության արդյունքների քննարկումը» վերնագրով գլխում ներկայացված է ստացված արդյունքների ընդհանրացումը և ամփոփումը: Ընդգծվում է, որ համակարգչային թեստավորման համակարգը ընդհանուր առմամբ տվել է դրական արդյունքներ, որոնք նաև անդրադարձել են պատանի ֆուտբոլիստների սպորտային արդյունքների վրա:

Հարկ է նշել, որ համակարգչային թրեյնինգի անցկացման ընթացքում բոլոր ֆուտբոլիստները մասնակցել են ռեակցիայի կատարելագործման սպորտային ծրագրում, որի ընթացքում կատարվել են հայցորդի կողմից մշակված արագաշարժության բարելավմանը նպաստող հատուկ վարժություններ: Ռեակցիայի ստուգման համար կիրառվել են գնդակի վարում հպմամբ 30մ և վարում շրջանցմամբ 30մ (3 կայաններ), վարժությունները, որոնք պահանջում են ռեակցիա, արագություն, ուշադրության կենտրոնացում և կոորդինացիա, չափվել է վարժության կատարման համար պահանջվող ժամանակը: Ի տարբերություն հիմնական խմբերի, ստուգողական խմբերի դեռահասները մասնակցել են միայն համակարգչային թրեյնինգին /մարզումներին:

Դեռահաս ֆուտբոլիստների տարիքի և որակավորման հաշվառմամբ, տեսողական ռեակցիայի արագության և ուշադրության կենտրոնացման զարգացմանը ուղղված համակարգչային մարզման ծրագրի արդյունավետության մասին են վկայում մշակված համակարգչային և հատուկ ֆիզիկական պատրաստության թեստավորման արդյունքները, ըստ հիմնական և ստուգողական խմբերի, իսկ ստացված ցուցանիշների

բազմակողմանի մաթեմատիկական վերլուծության արդյունքները վկայում են աշխատանքի գիտական բավարար հավաստիության մասին:

Ատենախոսական աշխատանքի վերլուծությունից հարկ ենք համարում առանձնակի ընդգծել հետազոտության արժեքավոր կողմերը.

✓ Հեղինակի կողմից կատարվել է ուսումնասիրվող հիմնահարցի շուրջ մասնագիտական գրական աղբյուրների վերլուծություն, թվով 166 գրականություն, ինչը հնարավորություն է ընձեռնում բացահայտել ուսումնասիրվող հիմնահարցի խնդիրները և առաջադրել դրանց լուծման ուղիները՝ կիրառելով գիտական հետազոտության արդի մեթոդների լայն շրջանակ:

✓ Մտեղծվել է հատուկ համակարգչային ծրագիր պատանի ֆուտբոլիստների տեսողական ռեակցիաների փորձարկման համար, որի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն իր համակարգչային ծրագրի դիզայնով մոտ է իրականությանը, որը թույլ է տալիս դեռահասների մոտ մշակել ռեակցիայի առավել կայուն հմտություններ:

✓ Համակարգչային թեստավորման ծրագիրը կիրառվել է ինչպես տեսողական ռեակցիայի և նրա համաչափության գնահատման, այնպես էլ տեսողական ռեակցիայի շտկման և կատարելագործման համար:

✓ Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են պատանի ֆուտբոլիստների տեսողական ռեակցիայի կախվածության օրինաչափությունները նրանց տարիքից և որակավորման աստիճանից, ինչպես նաև նրանց ընտրության և կողմնորոշման ցուցանիշները (խաղային դերի որոշում) կախված այդ օրինաչափություններից:

✓ Մշակվել է պատանի ֆուտբոլիստների համակարգչային մարզման և հատուկ ֆիզիկական վարժությունների համալիր կիրառության մեթոդիկա. տեսողական ռեակցիայի մարզման և շտկման համակարգչային թեստերը կազմվել են պատանիների տարիքի, որակավորման և ռեակցիայի մակարդակի հաշվառմամբ, որոշվել են համակարգչային մարզման ծրագրի օպտիմալ ցուցանիշները՝ կախված պատանի ֆուտբոլիստների պատրաստվածության աստիճանից և տարիքից:

✓ Գիտափորձի արդյունքում ապացուցվել է մշակված մեթոդիկայի արդյունավետությունը, հաստատվել է, որ տեսողական ռեակցիայի արագության և համաչափության շտկման համակարգչային թեստերը պետք է կիրառվեն համակցված՝

ռեակցիայի և ուշադրության կենտրոնացման մշակմանը ուղղված հատուկ ֆիզիկական վարժությունների համալիրների հետ:

✓ Մշակված մեթոդական առաջարկությունները կարող են կիրառվել ֆուտբոլի մանկապատանեկան մասնագիտացված մարզադպրոցների աշխատանքներում:

Դրական գնահատելով կատարված հետազոտությունը և կարևորելով ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը, հարկ ենք համարում նշել որոշ բացթողումների և վրիպումների մասին.

✓ Աշխատանքում հետազոտության նպատակը փոքր ինչ ընդարձակ է, կարելի էր ավելի հակիրճ ձևակերպել:

✓ 2.1 «Համակարգչային թեստավորման համար պատանիների ընտրության մեթոդը» ենթագլխում կարելի էր ավելի մանրամասն ներկայացնել շարժողական ընդունակությունների թեստավորման մեթոդները և որ թեստերով են դրանք չափվել:

✓ Հեղինակը նշում է, որ աղյուսակ 1-2-ում ներկայացված են շարժողական և հատուկ պատրաստվածության ցուցանիշները ըստ տարիքային խմբերի, սակայն հստակ չէ, թե այդ տվյալները ստացվել են իր կողմից անցկացված թեստավորման, թե գրականության վերլուծության արդյունքում: Լավ կլիներ ավելի մանրամասն պարզաբանել վերոնշյալ աղյուսակների տվյալները և ներգրավված փորձարկվողների քանակը ըստ հայցորդի կողմից առանձնացված տարիքային խմբերի և պատրաստվածության աստիճանի:

✓ Աշխատանքում կան որոշ անճշտություններ, մտքի կրկնություններ և տեխնիկական վրիպակներ:

Նշված բացթողումները էականորեն չեն ազդում կատարված գիտական հետազոտության որակի վրա, չեն նվազեցնում աշխատանքի գիտական արժեքը: Ուստի ամփոփելով կատարված աշխատանքը և դրանից բխող արդյունքները, գտնում ենք, որ այն կատարված է պատշաճ գիտական մակարդակով և համապատասխանում է ատենախոսական աշխատանքի կատարմանը ներկայացվող պահանջներին: Սեղմագիրը, հրատարակված գիտական հոդվածները արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսական աշխատանքի արդիականությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված արդյունքներն ու եզրակացությունները փաստում են, որ Իլյա Ալբերտի Խիպաշվիլիի «Ֆուտբոլիստների մարզման և ընտրության գործընթացի համակարգչային մեթոդը» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, ունի կարևոր տեսական և կիրառական նշանակություն, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագիտական թվանիշին, իսկ հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:


Կարծիքը քննարկվել և ընդունվել է ՇՊՀ-ի Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի և մանկավարժության ամբիոնների համատեղ նիստում (արձանագրություն թիվ 2):

Նիստին մասնակցել են՝ մ.գ.դ պրոֆեսոր Ռ. Մարդոյանը, Ա. Մկոյանը, մ.գ.թ պրոֆեսոր Բ. Սերոբյանը, Ա. Մաթևոսյանը, մ.գ.թ դոցենտ Լ. Ղուկասյանը, Ս. Կարապետյանը, Լ. Հակոբյանը, Ն. Ադամյանը, մ.գ.թ դոցենտ Գ. Աղանյանը, Լ. Միքայելյանը, Ա. Յայլոյանը, դոցենտ Արտուշ Խաչատրյանը, բ.գ.թ դոցենտ Լ. Գևորգյանը:

Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչի

ԺՊ, մ.գ.թ, դոցենտ՝  Գ. Աղանյանը

Մանկավարժության ամբիոնի վարիչի

ԺՊ, մ.գ.թ, դոցենտ՝  Լ. Ղուկասյան

Հաստատում եմ ստորագրությունները

ՇՊՀ հիմնադրամի գիտական քարտուղար



Կ. Պետրոսյան